ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ 2025թ. հունիսի 30-ին, N 135-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԵՂՆԻԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՕՆԻԿ ՄԱՆԱՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և ՀՀ Արագածոտնի մարզի <<Եղնիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օ. Մանասյանի 2025 թվականի հունիսի 30-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Եղնիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Օնիկ Մանասյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 10-ից օգոստոսի 13-ը ներառյալ:
2. Օնիկ Մանասյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Եղնիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել <<Եղնիկի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Վոլոդյա Խաչատրյանի վրա:
3. Օնիկ Մանասյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 14-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/1/2025 14:38:18 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457 Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ